ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՊԼԵՆՈՒՄ

Սովետական պրոֆեսիոնալ արվեստի անխախտելի վերելքը պահանջում է ժողովրդական արվեստի հազարամյակների խորքից մեզ հասած ժառանգության գեղարվեստական և գեղագիտական օրինաչափությունների, ստեղծագործական մեթոդների ու արտահայտչական միջոցների խորապես և նորովի ուսումնասիրությունը։

Սովետական բանագիտության առաջ ծառացած, գործնական մեծ նշանակություն ունեցող այս խնդրի այժմեականությունն այնքան ակնհայտ է, որ վերջերս ավելի ու ավելի հրատապ է դառնում բանահյուսության համամիութենական ինստիտուտի կամ հանրապետական ինստիտուտների ստեղծման անհրաժեշտությունը։ Այժմ արդեն նկատելի են այդ ուղղությամբ կատարվող կազմակերպչական որոշ աշխատանքներ, որոնք թերևս սկզբնավորում են սովետական բանագիտության զարգացման մի նոր փուլ։ Դրա ապացույցն է ապրիլի 13-17-ը Սովետական Միության մեջ առաջին անգամ Հայաստանում անցկացված պլենումը՝ նվիրված ժողովրդական երաժշտության հարցերին։ Պլենումը նախապատրաստվեց և անցկացվեց Հայաստանի կոմպոզիտորների միության նախաձեռնությամբ, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի, ՀՍՍՀ ԳԱ արվեստի, հնագիտության և ազգագրության ինստիտուտների համատեղ ջանքերով։

Պլենումի աշխատանքները սկսվեցին համերգաշարով, որի նպատակն էր հյուրերին և մասնակիցներին հնարավորություն տալ թարմացնել տպավորությունները և ամբողջական պատկերացմամբ վերագնահատել հայ ժողովրդական երաժշտության արդի վիճակը, ժողովրդականի հիման վրա ստեղծված ու զարգացած սովետահայ պրոֆեսիոնալ երաժշտական արվեստը, ժողովրդական և պրոֆեսիոնալ արվեստի փոխադարձ կապերը։

Շարքի առաջին համերգը նվիրված էր հայկական ժողովրդական երգային, գործիքային ու պարային արվեստի ազգագրական նմուշների ցուցադրմանը, երկրորդը՝ ժողովրդա-պրոֆեսիոնալ արվեստի՝ հայ աշուղական և գուսանական երգերին։ Ապա հաջորդեցին համերգներ՝ նվիրված հայ ժողովրդական երաժշտության կամերային վոկալ կամ գործիքային, երգչախմբային, էստրադային և սիմֆոնիկ մշակումներին։

Պլենումի աշխատանքի երկրորդ մասը կազմեցին բանագիտության հարցերով զբաղվող հայ երաժշտագետների զեկուցումները։

«Հայկական սովետական երաժշտական բանագիտության վիճակը և զարգացման մոտակա ինդիրները» զեկուցումով հանդես եկավ արվեստաբանության թեկնածու, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Աբայանը։ Զեկուցողը քննարկելով այս ասպարեզի նվաճումներն ու չլուծված հարցերը, հայ երաժշտական բանագիտությունը համարեց հայագիտության արմատական, բայց ետ մնացող ճյուղերից մեկը։ Նա նշեց սովետահայ երաժշտական բանագիտության մի շարք բանասիրական (պատմական տեղեկությունների հավաքում, բարբառային առանձնահատկությունների որոնում և այլն), տեսական, գեղագիտության, ազգային առանձնահատկությունների որոնում, սոցիոլոգիական և այլն) և գործնական-կազմակերպչական խնդիրները։

«Ժողովրդական երաժշտության հավաքումը» թեմայով զեկուցեց արվեստաբանության դոկտոր, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Մ. Մուրադյանը։

Զեկուցողն ամփոփեց մինչկոմիտասյան շրջանի (XIX դ.), Կոմիտասի, նրա աշակերտների և սովետական շրջանում հավաքված նյութի արժեքն ու նշանակությունը։ Նշելով բանահավաքման խնդիրները, Մուրադյանն ընդգծեց գիտարշավներն ավելի հաճախակի կազմակերպելու և Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների՝ քրդերի, ադրբեջանցիների, ռուսների, հույների և ասորիների ժողովրդական երաժշտության նմուշները գրառելու անհրաժեշտությունը։

Պլենումի հաջորդ զեկուցումը նվիրված էր «ՀՍՍՀ սահմաններից դուրս ապրող հայերի հայկական ժողովրդական երաժշտությանը»։ Այս թեմայով զեկուցեց տողերիս հեղինակը։ Զեկուցման մեջ շեշտվեց ՀՍՍՀ սահմաններից դուրս ապրող հայերի ժողովրդական երաժշտության գեղարվեստական ու գիտական մեծ արժեքը։ Հարատևելով հայրենիքից հեռու, այդպիսի երաժշտական նյութերը կարող են պատկերացում տալ մեր անցյալի երաժշտական արվեստի տարբեր ճյուղերի մասին։ Դարեր շարունակ ենթարկվելով հարևան ժողովուրդների արվեստի փոխադարձ ազդեցություններին, դրանք բացահայտում են մեր երաժշտության առավել կամ նվազ կայուն բնո-

բոլոր գծերը, փոխազդեցություններին ձևերն ու միջոցները։ Այս առումով նշված նյութերը հետաքրքիր են թե՛ հայ և թե՛ ընդհանուր բնագիտության տեսության համար, ուստի արժանի են բազմակողմանի ու մեծ ուշադրության։

Արվեստաբանության թեկնածու Մ. Բուռյանի զեկուցման թեման էր «Հայ ժողովրդական երաժշտության պրոպագանդայի հետ կապված պրոբլեմները»։ Համեմատելով ժողովրդական երաժշտության տարածման գրավոր և բանավոր միջոցներն ու նվաճումները, զեկուցողը գտավ, որ այս ասպարեզում կան լուրջ թերություններ, որ երբեմն ժողովրդականի անվան տակ մասսայականացվում է վատ ճաշակի, էկլեկտիկ երաժշտություն։ «Այս իմաստով,— ասաց նա,— անհրաժեշտ է ճշտել ինքնագործունեության նպատակը, ժողովրդական ստեղծագործության և պրոֆեսիոնալ արվեստի փոխադարձ կապերը»։

Երաժշտագետ Զ. Թազակյանը ներկայացրեց «Հայ միջնադարյան հոգևոր երգերը Ջավախքի ժողովրդական երաժշտական կենցաղում» թեման։ Համեմատությունների միջոցով զեկուցողը շոշափեց հայ ժողովրդի կենցաղում տարածված մի շարք հին երգերի ոճական, կատարողական, պատմական և այլ հարցեր։

«Քրդական երաժշտության և նրա զարգացման հետ կապված պրոբլեմները» թեմայով զեկուցեց արվեստաբանության թեկնածու Ն. Ջռուարին։ Զեկուցման մեջ քննարկվեցին քրդական պրոֆեսիոնալ երաժշտության ստեղծման հարցերը, որոնց կարևոր նախապայմանն են բանագիտական աշխատանքների ընդլայնումն ու կադրերի պատրաստումը։

«Նորագույն շրջանի հայկական կոմպոզիտորական արվեստը և հայ ժողովրդական երաժշտությունը» թեմայով զեկուցեց արվեստաբանության թեկնածու Ն. Թռեմիզյանը։ Նա հայկական նորագույն պրոֆեսիոնալ կոմպոզիտորական արվեստը ներկայացրեց որպես մի զարգացող պրոցես, որը սկիզբ առնելով (XIX դ) տարբեր ստեղծագործական անհատական ոճերից, կենտրոնացավ և բյուրեղացավ ազգային ոճի հայտնաբերման կետում (Կոմիտաս), որտեղից սկսեց ճառագայթաձև նոր զարգացում՝ դեպի ստեղծագործական տարբեր ժանրեր ու անհատական ոճեր, հասնելով պրոֆեսիոնալ ավելի բարձր մակարդակի։

Քննարկումներին մասնակցող մասնագետները բարձր գնահատեցին պլենումի նշանակությունը, նշեցին նման պլենումներ այլ հանրապետություններում ևս անցկացնելու անհրաժեշտությունը։

Մ. Թ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Արվեստաբանության թեկնածու